# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԵՔԻԱԹՆԵՐ

### 1. ՍԱՆԱՍԱՐՆ ՆԱՆ ԲԱՂԴԱՍԱՐԸ

*(էջ 12)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը (Կասպարովը) Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ա. Կասպարյանը ծնվել է 1898 թ. ԼՂԻՄ Ստեփանակերտի շրջանի Սարուշեն գյուղում։ Գրագետ է։ Արհեստավոր է՝ ատաղձագործ։ Երկար տարիներ ապրում է Բաքվում, սակայն կապված է հայրենի գյուղին. տուն ունի գյուղում և ամռան ամիսներն անց է կացնում այնտեղ։ Ա. Կասպարյանը գիտի բազմաթիվ հեքիաթներ, զրույցներ, որոնք՝ ըստ իր վկայության, լսել է իր կյանքի երիտասարդ տարիներին։*

*«Սանասարն Նան Բաղդասարը» բանասացը լսել է հայրենի Սարուշեն գյուղում, 20-ական թվականների վերջին համագյուղացի Սայամի Պավլուց, որն այդ ժամանակ եղել է 30—35 տարեկան։*

*Իր պատմածի վերաբերյալ Ա. Կասպարովը տալիս է հետևյալ բացատրությունը. «Սանասարն Նան Բաղդասարը տըրանք ճոխտ եղբայրներն են, բայց ըր առաջ Բաղդասարն ա ծնվալ՝ մեծ եղբայրը կոչվում ա Բաղդասար։ Սանասարը Բաղդասարից ուժեղ ա եղալ»։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 2. ԻՄԱՍՏՈՒՆ ՆԱՆ ԹԻԼԻՍՄԻՋԻՆ

*(էջ 14)*

*Պատմել է Արզուման Հասանյանը ԼՂԻՄ Մարտունու շըրջանի Խնուշինակ գյուղում 1972 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղաղիյանը։*

*Ա. Հասանյանը ծնվել է 1887 թ. Խնուշինակ գյուղում։ Գրաճանաչ է։ Բանվորություն է արել Բաքվում, Եվլախում, Աղդամում, Օրդուբադում։ 1928 թ. հաստատվել է գյուղում, մահացել է 1973 թ.։*

*Արզուման դային վկայում է, որ իր մանկության տարիներին գյուղում հեքիաթներ շատ էին պատմում և իր հիշողության մեջ մնացել են հատկապես այն տարիներին լսածները։*

*Սույն հեքիաթը վերջացնելով Արզուման դային հետևյալ կերպ է հրաժեշտ տալիս բանահավաքին. «Մհենըյ արեըտ կծիմ, կնեգյս չաա ա պոսը-պոսին կյամ, վեր ես էս ճըղացեն քըրեն յրա նստած քաթ ըմ պատմում, առ էլ մըշինավ կյիրում ըս։ Ինձ հետե չաա լյավ ա, վեր մարդ ըմ քյթալ, նհետը քախծր զըրուց ըմ անում, բայց քյնիմ, մին խրեղյ կնգանս քյոմագ անիմ։ Մնացածը մնա էս մին անգամ, լյա՞վ»։*

*Բնագիրը պահվում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում (այսուհետև՝ ՀԱԻԲԱ (FF XII։2675—2735)։*

### 3. ՕԽԱՑ-ԲԱԲԱ

*(էջ 22)*

*Պատմել է Արզուման Հասանյանը, 1972 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղաղիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF X։ 5479—5503)։*

### 4. ԱՆՄԱՀԱԿԱՆ ԽՆՁՈՐԸ

*(էջ 24)*

*Պատմել է Խաչատուր Մուսայելյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Հացի գյուղում, 1971 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղաղիյանը։*

*Խ. Մուսայելյանը ծնվել է 1895 թ. Հացի գյուղում, անգրագետ է, զբաղվում է հողագործությամբ։ Հեքիաթներ լսել և սովորել է գյուղի մեծերից։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF X։ 5157—5187)։*

### 5. ԿՑԵՐԹՆՈՒԿ ԱԽՃԻԴՑԸ

*(էջ 27)*

*Պատմել է Վահան Հայրապետյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Սոս գյուղում, 1973 թ.։ Գրի է առել Բ. Ղաղիյանը։*

*Վ. Հայրապետյանը ծնվել է 1894 թ. Սոսում։ Գրագետ է, գյուղում վարել է զանազան պաշտոններ։ Հեքիաթներ լսել և սովորել է գյուղի մեծերից։*

*Պատմման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 2829—2851)։*

### 6. ԹՈՒՐԸԹՅԱՄԲԻ

*(էջ 30)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղաղիյանը։*

*Ասացողի մասին տես № 1 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII։ 3215—3249)։*

### 7. ՋԿՆՈՐՍԻՆ ԸԽՃԿԵՐՔԸ

*(էջ 35)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղաղիյանը։*

*Ասացողի մասին տես № 1 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII։ 3219—3301)։*

## 8. ԿԻՍԼԱՆՋԸ

*(էջ 41)*

*Պատմել է Վահան Հայրապետյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Սոս գյուղում, 1973 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տես № 5 ծանոթագրությունը։*

*Գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 2893—2905)։*

## 9. ՕՁԱՄԱՆՈՒԿԸ

*(էջ 43)*

*Պատմել է Բախշի Հակոբյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Կարմիր շուկա ավանում, 1973 թ. ամառը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Բ. Հակոբյանը ծնվել է Սխտորաշեն գյուղում 1898 թ., անգրագետ է։ Ներկայումս ապրում է Կարմիր շուկայում։ Հեքիաթներ լսել և սովորել է իրենց գյուղում՝ մեծերից, իսկ ավլուլ հեքիաթը լսել է իր տատից։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FFXI։ 5537—5545)։*

## 10. ԴԵՎԻՆ ՏՂԱՆ ՆԱՆ ՄԱՐԴԻՆ ՏՂԱՆ

*(էջ 44)*

*Պատմել է Պողոս Աթայանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Գիշի գյուղում, 1971 թ. ամառանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Պ. Աթայանը ծնվել է 1909 թ. Գիշի գյուղում, զբաղվել է հողագործությամբ, կիսագրագետ է։ Հեքիաթները պատմելուց հետո նա հետևյալն ասաց բանահավաքին. «Դե ես քյնիմ, կործս կիսատ ա մնացալ. համ էլ ինձ ուրխըցրեր։ Գյուղում ըմ թա էս ղարում քաթ լսող մարդ չկա, լոխ ջաղված ըն։ Ես էլ քանե սարե ա, ..., պատմում չըմ. շատ ըմ գյուղում, պայց շատ ափսոս, ժամանակ չօնիմ։ Կյուս աեոնա լսողանց պապու հոգին, պատմողանց էլ. վեր մին էլ կյաս՝ շատ կասիմ»։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 3055—3067)։*

## 11. ԹՈՒՌՆԵՆ ԹԱՄԲԱԼԸ

*(էջ 45)*

*Պատմել է Արղաման Հասանյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղում, 1972 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին, տե՛ս № 2 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 2737—2777)։*

## 12. ՄԱՐԴՈՒ ԱՇԿԸ

*(էջ 50)*

*Պատմել է Միքայել Աղատյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1972 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Մ. Աղատյանը ծնվել է 1894 թ. Ղզղալայում, անգրագետ է։ Ապրել և աշխատել է նույն գյուղում, զբաղվել է հողագործությամբ։*

*Ձեռագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 0547—0563)։*

## 13. ՕԽՏԸ ՔՎԵՐՏԱՆՑ ՊԻՇԻՆԸ

*(էջ 52)*

*Պատմել է Փիրուզա Գրիգորյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Գիշի գյուղում, 1971 թ օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Փ. Գրիգորյանը ծնվել է 1914 թ., կիսագրագետ է։ Հեքիաթը լսել է փոքր ժամանակ, գյուղում։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FFVIII։ 3431—3553)։*

## 14. ԱԼԱՀՎԵՐԴՈՒ ՔԱԹԸ

*(էջ 54)*

*Պատմել է 92-ամյա Գրիգոր Պետրոսյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ճարտար գյուղում 1972 թ., ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Գրիգոր Պետրոսյանը ծնվել և մեծացել է Ճարտարում, «քիչ-միչ» գրագետ է։ Բանահավաքը հետևյալն է հաղորդում ասացողի վերաբերյալ. «Աշխատել է կոլտնտեսությունում։ Մինչև այժ զբաղվել է առևտրով։ Թոշակառու է. տեսողությունը լրիվ կորցրել է։ Հեքիաթների մեծ մասը լսել է գյուղում։ Առիթը եղած ժամանակ պատմել և կպատմի (իր ասելով, իհարկե) ինչքան որ կապրի։ Սակայն նա երկար չապրեց և հնարավորություն չունեցա՝ նրա շատ իմացած հեքիաթները գրի առնել։ Վախճանվել է 1973 թ.։ Հեքիաթ պատմելիս երգերը չի երգում, արտասանում է և այդ արտասանությունը դուր է գալիս թե՛ մեծերին, թե՛ փոքրերին, որոնք շրջապատել էին մեզ՝ աղբյուրի մոտ՝ թթի ծառի տակ։ Եվ նրանք էլ ինձ առաջնորդել էին «թազի ամենալավ քաթ գիդացողի կոշտը»։ Պետք է ասել, որ Ղարաբաղում մարդկանց ավելի շատ է հրապուրում չափածո խոսքը, քան՝ մեղեդին. ավելի շատ՝ բովանդակությունը, քան երգարվեստը»։*

*Գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 3003—3013)։*

## 15. ՆԱՄՈՒՍԱՎ ԿՆԵԳՅԸ

*(էջ 56)*

*Պատմել է Գրիգոր Պետրոսյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ճարտար գյուղում, 1972 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 3029—3043)։*

## 16. ԽԵԼՈՒՆՔ ԸՄ, ՓՈՂ ՉՕՆԻՄ

*(էջ 58)*

*Պատմել է Արղաման Հասանյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղում, 1972 թ. հուլիսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 2 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 3121—3193)։*

## 17. ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿՆԵԳՅԸ

*(էջ 60)*

*Պատմել է Արղաման Հասանյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղում, 1972 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF X։ 5441—5477)։*

### 18. ԻՐԵՔ ՄՆԵԹԱՎ ԻՆՔ ԿԱԼԱԾ ԽՈԽԱՆ

*(էջ 64)*

*Պատմել է Ալեքսան Սարգսյանը, ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1971 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ա. Սարգսյանը ծնվել է 1893 թ., ողջ կյանքն անց է կացրել Ղզղալա գյուղում, զբաղվել է հողագործությամբ։ Գիտի բազմաթիվ հեքիաթներ, որ լսել և սովորել է հայրենի գյուղում։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF X, 5241—5285)։*

### 19. ԳՑՈՒՂԱՑՈՒ ՀՆԱՐԱՄԻՏ ԱԽՃԻԳՑԸ

*(էջ 68)*

*Պատմել է Միշա Սարգսյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Հացի գյուղում, 1971 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Մ. Սարգսյանը ծնվել է Հացի գյուղում 1908 թ., կիսագրագետ է, զբաղվում է հողագործությամբ։ Հեքիաթը լսել է գյուղի մեծերից։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF X, 5189—5211)։*

### 20. ՄԱԳԱՐ ԽՈԽԱՆ ԽԵԼՈՒՆՔ ԿԻՆԻ

*(էջ 70)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 1 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII, 3455—3472)։*

### 21. ԹԱԳԱՎԵՐԵՆ ՕԽՏԸ ՏԱՐՎԱ ՔՑՍԲՈԹՈՒՆԸ

*(էջ 74)*

*Պատմել է Պավել Մանասարյանը Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Պ. Մանասարյանը ծնվել է Սխտորաշեն գյուղում, 1909 թ.։ Գրեթե անգրագետ է։ Հայրը եղել է հայտնի հեքիաթասաց։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII, 3367—3381)։*

### 22. ԹԱԳԱՎԵՐԵՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՏՂԵՆ

*(էջ 76)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում 1974 թ., օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII, 3147—3159)։*

### 23. ԸԽՊՐԱԿԵՆԸ

*(էջ 77)*

*Պատմել է Վահան Հայրապետյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Սոս գյուղում, 1973 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 5 ծանոթագրությունը։*

*Գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 2851—2861)։*

### 24. ՀԱՐՈՒՍՏԵ ԱԽՃԻԳՑԸ ՔՑՍԻԹԵՆ ՀԱՐԹՆԸ

*(էջ 79)*

*Պատմել է Պողոս Աթայանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Գիշի գյուղում, 1971 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 10 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ FF XI, 3049—3055)։*

### 25. ՐՂԿԱԼԵՆ ՏՂԱՆ ԹԱԳԱՎԵՐ

*(էջ 80)*

*Պատմել է 90-ամյա Սամսոն Սաղյանը ԼՂԻՄ Շուշվա շրջանի Ղարաղշլաղ գյուղում, 1976 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*



*Նկ. 5. Բանասաց Սամսոն Սաղյան*

*Ս. Սաղիյանը ծնվել է 1886 թ. Ղարաղշլաղում։ Անգրագետ է։ Կյանքն անց է կացրել հայրենի գյուղում։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 26. ԹԱԳԱՎԵՐԵՆ ԻՐԵՔ ԱՐԱՋԸ

*(էջ 81)*

*Պատմել է Աշոտ Առուստամյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ա. Առուստամյանը ծնվել է 1907 թ. Ղզղալա գյուղում։ Մասնագիտությամբ ուսուցիչ է։ Այժմ թոշակառու է։ Նրանից 1966—76 թթ. ընթացքում գրի են առնվել մի շարք*

*հեքիաթներ, զրույցներ մանրապատումներ, որոնք պահվում են ՀԱԻԲԱ Բ. Ղազիյանի և Ա. Ղազիյանի ֆոնդերում։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 2709—2714)։*

### 27. ԸՌԽԵՎԵՐ ՄԱՐ ՆԱՆ ԿՈՂՔԸ ՀԱՍՏ ՏՂԱՆ

*(էջ 82)*

*Պատմել է Արզար Հայրապետյանը ԼՂԻՄ Մարտունի ավանում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ա. Հայրապետյանը ծնվել է 1915 թ. Մարտունիում, կիսագրագետ է։ Զրույցը լսել է հանգուցյալ հորաքրոջից։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII, 2939—2948)։*

### 28. ԴԱՐՈՒՇԴԱՐԱՆԴԱՆ

*(էջ 83)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 1 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII, 3171—3183)։*

### 29. ԲԱԽՏԸ ԿՏՐՎԱԾ ՄԱՐԴԸ

*(էջ 85)*

*Պատմել է Աշոտ Առուստամյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տես № 26 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 2715—2723)։*

### 30. ՇԱՀ ԱԲԱՍԵՆ ՀՐԱՄԱՆԸ

*(էջ 86)*

*Պատմել է Դադաշ Ստեփանյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1966 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Դ. Ստեփանյանը ծնվել է 1890 թ. Աշանում։ Ունի տարրական կրթություն։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V, 4226—4238)։*

### 31. ՇԱՀ ԱԲԱՍԵՆ ԻՐԵՔ ԿՆԱՆԵՔԸ

*(էջ 88)*

*Պատմել է Արղաման Հասանյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղում, 1972 թ. հուլիսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 2 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 3111—3121)։*

### 32. ՇԱՀ ԱԲԱՍԵՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

*(էջ 89)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 1 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII, 3161—3171)։*

### 33. ՇԱՀ ԱԲԱՍՆ ՈՒ ԽՈՍՔ ՃԱԽՈՂ ՏՂԱՆ

*(էջ 91)*

*Պատմել է Սամսոն Պողոսյանը ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ս. Պողոսյանը ծնվել է Ստեփանակերտի շրջանի Խաս գյուղում 1898 թ., սակայն արդեն քառասուն տարի է ապրում է Ստեփանակերտում։ Բանասացը կիսադրագետ է։ Հեքիաթներ լսել և սովորել է գյուղում, երիտասարդ տարիներին։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 34. ՊԸՐԿԸՓՈԽԱՆ ԿՆԵԴՑԸ

*(էջ 92)*

*Պատմել է Արամ Ենայանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Սպիտակաշեն գյուղում, 1971 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ա. Ենայանը ծնվել է 1897 թ. Սպիտակաշենում, ողջ կյանքն անց է կացրել հայրենի գյուղում, զբաղվել է հողագործությամբ։*

*Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ (FF XI, 2677—2699)։*

### 35. ՔԸՋԱԼԻՆ ՔՑԼԸԳՆԵՐԱՆ

*(էջ 95)*

*Պատմել է Խորեն Հովսեփյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղում, 1973 թ.։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Խ. Հովսեփյանը ծնվել է 1910 թ. Թաղավարդում։ Կիսագրագետ է։ Հեքիաթներ լսել և սովորել է գյուղում, մեծերից։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 36. ԻՐԵՔ ԱԽՊՈՐ ՊԻԾԻՆԸ ՔԱՋԱԼՆ Ս.

*(էջ 98)*

*Պատմել է Վահան Հայրապետյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Սոս գյուղում, 1973 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 5 ծանոթագրությունը։*

*Գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 2877—2891)։*

### 37. ՍՈՏ ԽՈՍՈՂ ՊԵՏԻՆ

*(էջ 100)*

*Պատմել է Վահան Հայրապետյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Սոս գյուղում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 2811—2829)։*

### 38. ՄԻՆԸ ՄԻՆԱՆ ԺՈՒԼԻԿ ԸՆ ԻԼԱԼ

*(էջ 103)*

*Պատմել է Թադևոս Դանիելյանը ԼՂԻՄ Մարտունի ավանում, 1971 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Թ. Դանիելյանը ծնվել է 1906 թ. Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղում։ Գրագետ է։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 2613—2627)։*



Նկ. 6. Բանասաց Թևոս Դանիելյան

## 39. ԹԱՓՑԸՂԸ

*(էջ 105)*

*Պատմել է Արղոման Հասանյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղում, 1971 թ. և 1972 թ. օգոստոս ամիսներին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 2 ծանոթագրությունը։*

*Այս հեքիաթ-սիրավեպի տարբերակները տարածված են ինչպես Արցախում, այնպես էլ Հայաստանի տարբեր ազգագրական շրջաններում։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF X, 5325—5439)։*

## 40. ԱՌՅՈՒԾՆ ԱՌՅՈՒԾ Ա, ՕՁՈՒՄ Ա ԷՔ ԻՆԻ, ՕՁՈՒՄ Ա՝ ՎԵՐՑ

*(էջ 114)*

*Պատմել է Գևորգ Ղայամյանը Երևանում, 1975 թ. փետրվարին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Գ. Ղայամյանը ծնվել է 1911 թ. Լ. ՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում։ Գրագետ է, աշխատում է կոլտնտեսությունում։ Մասնակցել է Հայրենական պատերազմին։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII, 2997—3030)։*

# ԶՐՈՒՅՑՆԵՐ, ԱՌԱԿՆԵՐ, ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1. ԲԻՇԻՆ ՀՈՒ ԿԵՐԱՎ

*(էջ 119)*

*Պատմել է Սաշա Զարգարյանը Ադր. ՍՍՀ Շահումյանի շրջանի Երիցեն գյուղում, 1975 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ս. Զարգարյանը, որին Շաշա դայի են ասում, ծնվել է նույն գյուղում 1877 թ.։ Անգրագետ է։ Գիտի հեքիաթներ, զրույցներ։ Ինչ-որ պատմում է լսել և սովորել է երիտասարդության տարիներին գյուղի մեծերից։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Բ. Ղազիյանի ֆոնդ, 1975 թ.)։*

## 2. ՀՐԻՇՏԱԿԻ ԲՈՂՈՔԸ ԱՍՏԾՈՒՆ

*(էջ 121)*

*Պատմել է Սոկրատ Հովհաննիսյանը Ադրբ. ՍՍՀ Շահումյանի շրջանի Խարխափուտ գյուղում, 1975 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ս. Հովհաննիսյանը ծնվել է 1914 թ. Խարխափուտ գյուղում։ Գրագետ է։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Բ. Ղազիյանի ֆոնդ, 1975 թ.)։*

## 3. ԸՍՏՈՒԾՆ ՏՎԱԾԸ

*(էջ 122)*

*Պատմել է Դազաշ Սահփանյանը (Առուշանյանց). ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1966 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Դազաշ Ստեփանյանը ծնվել է 1890 թ.։ Ունի տարրական կրթություն։ 1920—30 թթ. ապրել է Բաքու քաղաքում, ապա նորից հաստատվել է գյուղում և զբաղվել հողագործությամբ։ Թոշակառու է։ Նրա բոլոր պատմածները, ըստ իր վկայության, սովորել է գյուղում՝ լսելով։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ Ա. Ղազիյանի ֆոնդում (FF V, 4240—4242)։*

## 4. ԱՂՈՒՀԱՑԸ

*(էջ 123)*

*Պատմել է Գևորգ Ղայամյանը ԼՂԻՄ Աշան գյուղում, 1975 թ.։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 40 ծանոթագրությունը։*

*Գրառման բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 5 ՀԼԵՎՈՒՐ ՀԱՐ ՆԱՆ ՏՂԱՆ

*(էջ 123)*

*Պատմել է Բողի Սողոմոնյանը 1977 թ. ամռանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում։ Գրի է առել Ա. Ղաղիյանը։*

*Բ. Սողոմոնյանը ծնվել է 1887 թ. նույն գյուղում, անգրագետ է, կյանքն անց է կացրել գյուղում։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղաղիյանի ֆոնդ, 1977 թ.)։*

### 6. ԹԱՔԱՎՆԵՐԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

*(էջ 123)*

*Պատմել է Վարսի Ավագյանը 1977 թ. ամռանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում։ Գրի է առել Ա. Ղաղիյանը։*

*Վ. Ավագյանը ծնվել է 1902 թ. նույն գյուղում, անգրագետ է զրույցը լսել է գյուղի մեծերից։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղաղիյանի ֆոնդ, 1977 թ.)։*

### 7. ԱԽԿԱՏ ԷՀ ԿԱ, ԱԽԿԱՏ ԷՀ

*(էջ 124)*

*Պատմել է Սամսոն Սաղյանը 1976 թ. օգոստոսին ԼՂԻՄ Շուշվա շրջանի Ղարաղշլաղ գյուղում։ Գրի է առել Բ. Ղաղիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 25 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 8. ՁՈՒՏՈՂՆԵՆ ՄԱԼԸ ՈՒՏՈՂՆԵՆ ՀԱԼԱԼ

*(էջ 124)*

*Պատմել է Սամսոն Սաղյանը ԼՂԻՄ Շուշվա շրջանի Ղարաղշլաղ գյուղում։ Գրի է առել Բ. Ղաղիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 25 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 9. ԿՑԻՆՈՒ ՕԺԸ

*(էջ 125)*

*Պատմել է Սահակյանը* ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1971 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղաղիյանը։*

*Սահակյանը ծնվել է 1896 թ., ողջ կյանքն անց է կացրել հայրենի գյուղում։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF X։ 5315—5323)։*

### 10. ՄԱՐԴՈՒ ԸՐԱԾ ՓԻՍ ՊԵՆԸ ՈՐԴՈՒ ԱՌԱՋՆ Ա ԿՑԱՄ

*(էջ 125)*

*Պատմել է Թադևոս Դանիելյանը ԼՂԻՄ Մարտունի ավանում, 1971 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղաղիյանը։*

*Այս զրույցը, որը իրողություն է հիշեցնում, շատ տարածված է Արցախում զանազան տարբերակներով։*

*Ասացողի մասին տե՛ս № 38 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 2629—2641)։*

---

* *Անունը չի նշվել (Ծ. Կ.)։*

### 11. ԱԶՆԻՎ ԿՆԳԱՆ ՏԵՂ՝ ԱԶՆԻՎ ՇԱՆ ԿՑԵՆԱՑԸ

*(էջ 127)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղաղիյանը։*

*Այս զրույցը տարածված է Արցախում և պատմվում է իբրև իրական դեպք։*

*Ասացողի մասին տե՛ս № I ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII։ 3319—3331)։*

### 12. ՏՎԱՐԱԾ ԴԵՐԸ

*(էջ 129)*

*Պատմել է Արտեմ Մելքումյանը ԼՂԻՄ Մարտունու շըրջանի Շեխեր գյուղում, 1972 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղաղիյանը։*

*Ա. Մելքումյանը ծնվել է 1900 թ. Շեխերում, ապրել և աշխատել է գյուղում, անգրագետ է։ Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին։ Իր իմացած հեքիաթները և զրույցները լսել է գյուղի մեծերից։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 5437—5442)։*

### 13. ԴՈՆԳԻՆ ՄԻՆԸ ՁԻ, ՍԱՂ ՇԵՆՆ Ա

*(էջ 129)*

*Պատմել է Արամ Առաքելյանը Հադրութի շրջանի Դուդուկչի գյուղում 1979 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղաղիյանը։*

*Ա. Առաքելյանը ծնվել է 1909 թ.։ Ունի 5-րդ դասարանի կրթություն։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղաղիյանի ֆոնդ, 1979 թ.)։*

### 14. ԼՈՂՄԱՆԻ ԲԺԻՇԿԸ

*(էջ 130)*

*Պատմել է Սամուր Ստեփանյանը ԼՂԻՄ Մարտունու շըրջանի Աշան գյուղում, 1977 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղաղիյանը։*

*Ս. Ստեփանյանը ծնվել է 1897 թ., ապրում և աշխատում է հայրենի գյուղում, գրեթե անգրագետ է։ Զրույցը լսել է իր հորից, որը եղել է լավ հեքիաթասաց և ժողովրդական բժիշկ՝ հեքիմ։*

*Սույն զրույցի մի տարբերակը Աշանում պատմեց նաև Սարգիս Պողոսյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղաղիյանի ֆոնդ, 1977 թ.)։*

### 15. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱԹ

*(էջ 130)*

*Պատմել է Եսայի Եսայանը ԼՂԻՄ Մարտունի ավանում, 1973 թ.։ Գրի է առել Բ. Ղաղիյանը։*

*Ե. Եսայանը ծնվել է 1916 թ., գրագետ է (տեղական թերթի խմբագիրն է)։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 2599—2603)։*

### 16. ԱՐՋ ՆԱՆ ՏՂԱՆ

*(էջ 131)*

*Պատմել է Միքայել Աղաստյանը ԼՂԻՄ Մարտունու շըրջանի Ղզղալա գյուղում, 1972 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*
*Ասացողի մասին տե՛ս №12 ծանոթագրությունը։*
*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 0573—0579)։*

### 17. ԱՂՎԵՍԸ, ԸԼԹԱՍՏՐԱԿԸ, ԱՐՋԸ, ԿՅՈՒԼԸ

*(էջ 132)*

*Պատմել է Դադաշ Ստեփանյանը ԼՂԻՄ Մարտունու շըրջանի Աշան գյուղում, 1966 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*
*Ասացողի մասին տե՛ս № 3 ծանոթագրությունը։*
*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V, 4212—4220)։*

### 18. ԱՐՋԻՆ ՀԱՆԱՔՅԸ

*(էջ 133)*

*Պատմել է Դադաշ Ստեփանյանը ԼՂԻՄ Մարտունու շըրջանի Աշան գյուղում, 1966 թ. օգոստոսին։ Գրի ը առել Ա. Ղազիյանը։*
*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V։ 4220—4222)։*

### 19. ԱՂՎԵՍ ՆԱՆ ՎԵՐՅԱԿԸ

*(էջ 133)*

*Գրի է առել Աշոտ Առուստամյանը Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում 1967 թ. ապրիլին։*
*Ասացողի մասին տե՛ս № 26 ծանոթագրությունը։*
*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V։ 4393—4394)։*

### 20. ԷԾ ՆԱՆ ՎԵԽԺԱՐԸ

*(էջ 133)*

*Ասել է Մեսրոպ Դալլաքյանը ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*
*Մ. Դալլաքյանը ծնվել է 1897 թ. Մեծ Թաղլարում։ Կիսագրագետ է։ Աշխատում է կոլտնտեսությունում։*
*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 5461)։*

### 21. ՄԻԱՄԻՏ ԾԻԱԾԱԽԸ

*(էջ 134)*

*Պատմել է Սերո Արրահամյանը Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1978 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*
*Ս. Արրահամյանը ծնվել է Աշան գյուղում՝ 1926 թ.։ Գրագետ է։ ապրում և աշխատում է Բաքու քաղաքում։*
*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 22. ՀԱՐՈՒՍՏԵՆ ԱԽԺԻԳՅ ՆԱՆ ՆՈՔՅԱՐԸ

*(էջ 134)*

*Պատմել է Շուքյուր Խեչումյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1971 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*
*Շ. Խեչումյանը ծնվել է 1870 թ. Աշանում, անգրագետ է, զբաղվել է հողագործությամբ, այգեգործությամբ։*
*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 23. ՋՈԲԱՆԵՆ ՆՎԵՐԸ

*(էջ 134)*

*Պատմել է Թևան Հարությունյանը ԼՂԻՄ Մարտունու շըրջանի Ղզղալա գյուղում, 1972 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*
*Թ. Հարությունյանը ծնվել է 1906 թ., գրագետ է։ Ապրում և աշխատում է հայրենի՝ Ղզղալա գյուղում։*
*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF X։ 5545—5547)։*

### 24. ԽԵԼՔՈՒ ԺԱՐԸ

*(էջ 134)*

*Պատմել է Թագևոս Դանիելյանը ԼՂԻՄ Մարտունի ավանում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*
*Ասացողի մասին տե՛ս № 38 ծանոթագրությունը։*
*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII։ 2923—2925)։*

### 25. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԵՆ ԺՅՈՒՐ ՏԱԼԸ

*(էջ 135)*

*Պատմել է Թագեոս Դանիելյանը ԼՂԻՄ Մարտունի ավանում, 1971 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*
*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 2669—2670)։*

### 26. ԿՅԻՆՈՒ ԿԱՐԱՍԸ

*(էջ 135)*

*Պատմել է Թադևոս Դանիելյանը ԼՂԻՄ Մարտունի ավանում, 1971 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*
*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 2667—2669)։*

### 27. ՀԵՐ ՈՒ ՏՂԱ

*(էջ 135)*

*Պատմել է Թագեոս Դանիելյանը ԼՂԻՄ Մարտունի ավանում, 1971 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*
*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 2665—2666)։*

### 28. ԴԻՐԱԿԵՆ ՆԱՆ ՓԱԼԱՆԴՈՒՋԸ

*(էջ 136)*

*Պատմել է Թագևոս Դանիելյանը ԼՂԻՄ Մարտունի ավանում, 1973 թ. գոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*
*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII։ 2893—2895)։*

### 29. ՓԱՆԴԱՎ ԳՅՈՒՂԱՑԻՆ

*(էջ 136)*

*Պատմել է Թագևոս Դանիելյանը ԼՂԻՄ Մարտունի ավանում, 1971 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*
*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 2671—2675)։*

### 30. ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

*(էջ 136)*

*Պատմել է Աշոտ Առուստամյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 26 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 5527—5529)։*

### 31. ՔԱՌԱՍՏԱՆՈՒՄ

*(էջ 137)*

*Պատմել է Ամիրբեկ Արզանգուլյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ա. Արզանգուլյանը ծնվել է 1932 թ. նույն գյուղում։ Զրույցը լսել է գյուղի մեծերից։*

*Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ (FF XI, 2959—2961)։*

### 32. ՀԱՄԵՍՏ Ա, ԲԱՑՑ ՄՌՆԵԼԱՆ ԽՏԸ

*(էջ 137)*

*Պատմել է Ռաղմիկ Բալասանյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Սպիտակաշեն գյուղում, 1971 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 2701—2703։*

### 33. ԿՆԳԱՆԸ ՍԱԲԻՐԸ ԽԵՐ Ա, ԹԱ՞ ՇԱՌ

*(էջ 138)*

*Պատմել է Ռուբեն Քոչարյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1971 թ. ամռանը Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ռ. Քոչարյանը ծնվել է նույն գյուղում 1906 թ.։*

*Գրառման բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 3072)։*

### 34. ԴՌՆԳԻ ԿՅՌՂԸ

*(էջ 138)*

*Պատմել է մի միջահասակ տղամարդ, ԼՂԻՄ Մարտունի ավանում, 1973 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 2671)։*

### 35. ՀԱՐԲԵՑՈՂ ՊԱՀԵՍՏԱՊԵՏԸ

*(էջ 138)*

*Պատմել է Էռնեստ Եսայանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1974 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Է. Եսայանը ծնվել է 1954 թ., նույն շրջանի Սպիտակաշեն գյուղում։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 36. ՔԱՑԱԼԸ, ՔԱՌԸ, ՏԿԼՈՐ ՆԱՆ ՔՈՌԸ

*(էջ 138)*

*Պատմել է Էռնեստ Եսայանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում 1974 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 37. ՕՂՏԵՆ ՅՐԱ ՓՈԽԵՆՔ ՕՏԵԼԸ

*(էջ 138)*

*Պատմել է Սարգիս Պողոսյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1973 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ս. Պողոսյանը ծնվել է 1918 թ., ողջ կյանքն անց է կացրել Աշանում։ Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 5495—5497)։*

### 38. ՊԱՌԱՎ ՆԱՆ ՃՂՈՊՈՒՐԸ

*(էջ 138)*

*Պատմել է Բարխուդար Ղազիյանը Երևանում, 1977 թ.։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Բ. Ղազիյանը ծնունդով ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղից է, զրույցը լսել է փոքր ժամանակ իրենց սան մեծերից։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ Ա. Ղազիյանի ֆոնդում (1977 թ.)։*

### 39. ԾԻԼԻՆ

*(էջ 139)*

*Պատմել է Աշոտ Առուստամյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 26 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI 2725)։*

### 40. ՄԵԽՆՈՂ ԱՄՈՒՍՆՈՒ ՊԱՏՎԵՐԸ

*(էջ 139)*

*Պատմել է Աշոտ Առուստամյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1970 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF VI, 8274)։*

### 41. ՀՈՂԱԳՈՐԾՆ ՈՒ ՏՂԱՆ

*(էջ 139)*

*Պատմել է Հակոբ Խաչատրյանը ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Ջալլու գյուղում, 1971 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Հ. Խաչատրյանը ծնվել է 1890 թ. նույն գյուղում, անգրագետ է, զրույցներ լսել և սովորել է հայրենի գյուղում։*

*Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ (FF X, 5537)։*

### 42. ՄՈԼԼԱ ՆԱՍՐԱԴԻՆ ՆԱՆ ԱՍՏՎԱԾԸ

*(էջ 139)*

*Պատմել է Արտեմ Մելքումյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Շեխեր գյուղում, 1972 թ. հուլիսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 12 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 0619—0621)։*

## 43. ՄՈԼԼԱ ՆԱՍՐԱԴԻՆԻ ՑՈՐԵԱՆԸ

*(էջ 139)*

*Պատմել է Հակոբ Խաչատրյանը ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Չայլու գյուղում, 1971 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 41 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF X, 5537—5539)։*

## 44. ՊԸԼԸ-ՊՈՒՂՈՒՆ ԾԻՆ ԾԻԾԱՂՈՒՄ Ա

*(էջ 133)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 1 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII, 3115—3117)։*

## 45. ՊԸԼԸ-ՊՈՒՂՈՒՆ ՂԶՂԱՆԸ

*(էջ 140)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII, 3117—3123)։*

## 46. ՊԸԼԸ-ՊՈՒՂՈՒ ՕԽՏԸ ՊԵՌՆԸ ՑՈՐԵՆԸ

*(էջ 140)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII, 3125—3129)։*

## 47. ՊԸԼԸ-ՊՈՒՂՈՒՆ ԷՇԸ

*(էջ 141)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII, 3129)։*

## 48. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵՆ ՔԵԹԸ

*(էջ 141)*

*Պատմել է Արտաշես Կասպարյանը ԼՂԻՄ Ստեփանակերտ քաղաքում, 1974 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XII, 3123—3125)։*

## 49. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵՆ ԲԱԶԵՆ

*(էջ 141)*

*Պատմել է Էմիլ Բալայանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1975 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Բ. Ղազիյանի ֆոնդ, 1975 թ.)։*

## 50. ՏԻԿՐԱՆԻ ԱՐՔԱՑՈՒԹՅՈՒՆԸ

*(էջ 141)*

*Պատմել է Համբարձում (Համփարցի) Փաթալյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում 1977 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Հ. Փաթալյանը ծնվել է 1882 թ., կույր է, գյուղում նրան «աշըղ» են ասում։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղազիյանի ֆոնդ, 1977 թ.)։*

## 51. ՏԻԿՐԱՆԸ ՔԱՂԱՔԸ ՋԻ ՍԻՐՈՒՄ

*(էջ 141)*

*Պատմել է Գևորգ Ղայամյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1977 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 40 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղազիյանի ֆոնդ. 1977 թ.)։*

## 52. ՏԻԿՐԱՆ ՆԱՆ ԲԺԻՇԿ ՆՈՐԻԿԸ

*(էջ 142)*

*Պատմել է Գևորգ Ղայամյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1971 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Գ. Ղայամյանի մասին տե՛ս № 40 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղազիյանի ֆոնդ, 1977 թ.)։*

## 53. ՏԻԿՐԱՆԻ ԷՇ ՆԱՆ ՄԱՇԻՆԸ

*(էջ 142)*

*Պատմել է Լևոն Հարությունյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1966 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Լ. Հարությունյանը ծնվել է 1928 թ. Աշանում։ Մասնագիտությամբ հայոց լեզվի և գրականության ուսուցիչ է։ Ունի նաև ինքնուրույն տպագրված գործեր (բանաստեղծություններ, պատմվածքներ)։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V, 4298)։*

## 54. ՏԻԿՐԱՆԸ ՀՈՆՁ Ա ԱՆՈՒՄ

*(էջ 142)*

*Պատմել է Լևոն Հարությունյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1966 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V, 4114)։*

## 55. ՏԵԿՐԱՆ ՆԱՆ ՇՈՆԸ

*(էջ 142)*

*Պատմել է Լևոն Հարությունյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1966 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱՀԲԱ (FF V, 4116)։*

## 56. ՋԱՓԱՐԸ ԿՆԱՄԵԾԱՐ

*(էջ 142)*

*Պատմել է Գևորգ Ղայամյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1977 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 40 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղազիյանի ֆոնդ, 1977 թ.)։*

## 57. ԿԻԿԱՆԱՆՑ ՆԵՍԻՆ ՆԱՆ ՇՈՒՔՑՈՒԻՐԸ

*(էջ 142)*

*Պատմել է Գևորգ Ղայամյանը 1977 թ. օգոստոսին ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Բսագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղազիյանի ֆոնդ, 1977 թ.)։*

## 58. ՂԱՎԱՆԴԸ ԵՐԵԽԱՅԻՑ ԴԱՍ Է ՎԵՐՑՆՈՒՄ

*(էջ 143)*

*Պատմել է Համբարձում Փաթալյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1977 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 50 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղազիյանի ֆոնդ, 1977 թ.)։*

## 59. ԸՎՆԵՍԱՆՑ ԿՈՒՔԻՆ

*(էջ 143)*

*Պատմել է Հմայակ Մկրտչյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Հ. Մկրտչյանը ծնվել է 1923 թ.։ Աշանում, ուր այժմ էլ ապրում ու աշխատում է։ Ունի միջնակարգ կրթություն։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 60. ՄԻՆ ԴԱԼԼԱՔ Ա ԻԼԱԼ

*(էջ 143)*

*Պատմել է Աշոտ Առուստամյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Գազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 26 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 5497)։*

## 61. 62. ԲՈՒԴՈՒ ՍՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

*(էջ 143)*

*Պատմել է Ռաֆիկ Իսրայելյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1973 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանրը։*

*Ռ. Իսրայելյանը ծնվել է 1928 թ. Թոռալայում։ Մասնագիտությամբ անասնաբույժ է։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 63. ՀԱՂՈՂ ԾԱԽՈՂԸ

*(էջ 143)*

*Պատմել է Խաչա Ավագյանը Ադր. ՍՍՀ Շահումյանի շրջանի Հայ-Պարիս գյուղում, 1975 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Բ. Ղազիյանի ֆոնդ, 1975 թ.)։*

## 64. ՄՈՌԱՑՎԱԾ ՀԱՐՍԱՆՔԱԿԱՆՉ

*(էջ 143)*

*Պատմել է Ռաֆիկ Իսրայելյանը 1973 թ. ամռանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 61 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 65. ԱՌՈՒՍՏԱՄ ԴԱՅՈՒ ՁԻՈՒ ԿՏԱԿԸ

*(էջ 144)*

*Պատմել է Ռաֆիկ Իսրայելյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1973 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 66. ԱՌՈՒՍՏԱՄ ԴԱՅՈՒ ՄԱՅԱՂԸ

*(էջ 144)*

*Պատմել է Ռաֆիկ Իսրայելյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1973 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Գավիյանը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 67. ՀԱՑԵՑՈՒ ԷՇԸ

*(էջ 144)*

*Գրի է առել Բ. Ղազիյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1977 թ. ամռանը։*

*Բանահավաքը զրույցը լսել է բազմիցս Աշանում և հարևան գյուղերում, ուր հացեցիների միամտությունը ծաղրի առարկա է հանդիսացել։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 68. ԽՆՈՒՇՆԿԵՑՈՒ ԿԱՎԻՆ ՇՈՌ ԿՑԱԼԸ

*(էջ 145)*

*Պատմել է Սարգիս Ավետիսյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Նոր չեն գյուղում, 1973 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ա. Ավետիսյանը ծնվել է 1902 թ. նույն գյուղում, կիսագրագետ է։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 5499)։*

## 69. ՀԱՐԹՆԸ ՓԱՀԼՎԱՆ

*(էջ 145)*

*Պատմել է Լևոն Հարությունյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1977 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 53 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղազիյանի ֆոնդ, 1977 թ.)։*

## 70. ԷՇԻՆ ՔՈՌԱԿ ՆԱՆ ՂՈՆԱՂԸ

*(էջ 145)*

*Գրի է առել Աշոտ Առուստամյանը, ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1967 թ. ապրիլին։*

*Ասացողի մասին տե՛ս № 26 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V։ 4404—4405)։*

## 71. ԱՂԱՋԱՆ ԴԱՑՈՒ ՎԵՐՍԸ

*(էջ 145)*

*Պատմել է Շահեն Խաչատրյանը ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում, 1977 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Շ. Խաչատրյանը ծնվել է 1927 թ., ղրագետ է, ապրում և աշխատում է Մեծ Թաղլարում. զրույցները լսել և սովորել է գյուղի մեծերից։*

*Բնագիրը գտնվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղազիյանի ֆոնդ, 1977 թ.)։*

## 72. ԷՇԵՐԻՆ ԽՐԱՏԵԼԸ

*(էջ 145)*

*Պատմել է Միրզա Աղամալյանը Ադրբ. ՍՍՀ Շահումյանի շրջանի Գյուլստան գյուղում, 1975 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Մ. Աղամալյանը ծնվել է 1896 թ., կյանքն անց է կացրել հայրենի գյուղում։ Կիսագրագետ է։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Բ. Ղազիյանի ֆոնդ, 1975 թ.)։*

## 73. ԳՅՈՒՂԱՏՆԵՑԻ ԽՈԶԱՐԱԾԸ

*(էջ 146)*

*Պատմել է Բաղդասար Գևորգյանը Ադրբ. ՍՍՀ Շահումյանի շրջանի Խարխափուտ գյուղում, 1975 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բ. Գևորգյանը ծնվել է նույն գյուղում 1889 թ., անգրագետ է։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Բ. Ղազիյանի ֆոնդ, 1975 թ.)։*

# ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 1. ՋԱՀՆԱՁ ԵՎ ՔՅՈՒՄԲԱԹ

*(էջ 146)*

*Պատմել է Լևոն Հարությունյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1970 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 53 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF VI։ 8264)։*

## 2. ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԴԻՇԱ ՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

*(էջ 148)*

*Պատմել է Սիսակ Մելքումյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Կարմիր Շուկա ավանում, 1972 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ս. Մելքումյանը ծնվել է 1880 թ., անգրագետ է, ավանդությունը լսել է իր պապից։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF X։ 5507—5511)։*

## 3. ԾՈԽՏ ԽԱՉ

*(էջ 147)*

*Պատմել է Գրիգոր Մելքումյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ավդուռ գյուղում, 1973 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Գ. Մելքումյանը ծնվել է 1898 թ. Ավդուռ գյուղում, կիսագրագետ է. հեքիաթներ և զրույցներ սովորել է լսելով գերես մանկության և երիտասարդության տարիներին՝ հայրենի գյուղում։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 4. ՀԱՅԵՐՈՒ ԽԱՉԸ

*(էջ 147)*

*Պատմել է Շահեն Խաչատրյանը ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում, 1977 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 71 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 5. ՏՋՐՓԱԴԻՆ ՍՈՐՓԸ

*(էջ 147)*

*Պատմել է Շահեն Խաչատրյանը ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում, 1977 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 6. ՆԼԲԱՆԴԱՆՑ ՍՈՐՓԸ

*(էջ 147)*

*Պատմել է Սերյոժա Ղայամյանը ԼՂԻՄ Մարտունու շըրջանի Աշան գյուղում, 1976 թ. օգոստոսին, Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ս. Ղայամյանը ծնվել է 1924 թ., ողջ կյանքն անց է կացրել Աշանում, գրագետ է։ Ավանդությունը լսել է գյուղի մեծերից։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 7. ԱՐՋՈՒՄԱՆ ՄԵՋԻԴ

*(էջ 148)*

*Պատմել է Մեսրոպ Դալլաքյանը ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում, 1972 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 20 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 0727—0729)։*

### 8. ՊԱՐԻՆԳԻԺ

*(էջ 148)*

*Պատմել է Սամսոն Սաղյանը ԼՂԻՄ Շուշվա շրջանի Կարաղշլաղ գյուղում, 1976 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 33 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղազիյանի ֆոնդ, 1976 թ.)։*

### 9. ՀԻՆ ՂԱԼԱ

*(էջ 148)*

*Պատմել է Եղիշե Աթայանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ճարտար գյուղում, 1972 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ե. Աթայանը ծնվել է 1937 թ. Ճարտարում, ապրում և աշխատում է նույն գյուղում։ Ավանդությունը լսել է գյուղի մեծերից։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 0719—0721)։*

### 10. ՂՋՂԱԼԱ

*(էջ 148)*

*Պատմել է Գրիգոր Առուստամյանը (Ծուկանանց) ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Գ. Առուստամյանը ապրում է գյուղում, զբաղվել է հողագործությամբ, կիսագրագետ է. սույն ավանդությունը ասում է նաև չափածո։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 5503—5504)։*

### 11. ԹՂԱՍԸՌ

*(էջ 149)*

*Պատմել է Շահեն Խաչատրյանը ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում, 1977 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 71 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 12. ԽՄԱԲԵՐԴ

*(էջ 149)*

*Պատմել է Շահեն Խաչատրյանը ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում, 1977 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 13. ՇԱՀՄԱՍՈՒՐ ԳՑՈՒՂ

*(էջ 149)*

*Պատմել է Սերյոժա Ղայամյանը ԼՂԻՄ Մարտունու շըրջանի Աշան գյուղում, 1972 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 6 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 0721—0723)։*

### 14. ՀԱՐԱՄԻ

*(էջ 149)*

*Պատմել է Գևորգ Ղայամյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1975 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 40 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 15. ԱՂՋԱԲԱԴԻ ԲՆԱԿԱՎԱՅՐ

*(էջ 149)*

*Պատմել է Գևորգ Ղայամյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1975 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 16. ՀԱՑԻ ԳՅՈՒՂ

*(էջ 149)*

*Պատմել է Գուրգեն Բալայանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Հացի գյուղում, 1969 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Գ. Բալայանը ծնվել է 1906 թ., ապրում և աշխատում է գյուղում։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

### 17. ԿԱՂԱՐԾԻ ԳՅՈՒՂ

*(էջ 150)*

*Պատմել է Նորիկ Պողոսյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Կաղարծի գյուղում, 1970 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ն. Պողոսյանը ծնվել է նույն շրջանի Աշան գյուղում 1919 թ., մասնագիտությամբ ուսուցիչ է, աշխատում է Կաղարծի գյուղում։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF VI։ 8230)։*

## 18 ՋԱՆԳԵԶՈՒՐ

*(էջ 150)*

*Պատմել է Թավադ Շինգյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում 1966 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Թ. Շինգյանը ծնվել է 1886 թ., գիտի գրել, կարդալ։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V։ 4130—4132)։*

## 19. ՄՄԱՔԱՐ

*(էջ 150)*

*Պատմել է Լևոն Հարությունյանը Մարտունու շրջանի Ղըզղալա գյուղում, 1970 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 53 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V1, 8268)։*

## 20. ԳՈՎԱԼԵՆՋ

*(էջ 150)*

*Պատմել է Շահեն Խաչատրյանը ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում, 1977 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 71 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 21. ՇԱՀՆԱՔԱՐ, ՇՀՆԱՔԱՐ

*(էջ 150)*

*Պատմել է Սամսոն Սաղիյանը ԼՂԻՄ Շուշվա շրջանի Ղարաղշլաղ գյուղում, 1976 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 33 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղազիյանի ֆոնդ, 1976 թ.)։*

## 22. ԳՅՈՒՐՋԻ ՔՈԼ

*(էջ 151)*

*Պատմել է Վասիլ Ասրյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*



Նկ. 7. Բանասացներ Արամ, Վասիլ, Իվան

*Վ. Ասրյանը ծնվել է 1895 թ., անգրագետ է. ողջ կյանքն անց է կացրել գյուղում։ Թոշակառու է։ Կուրացել է երկու աչքով։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 23. ՂՈՐՄՈՒՑՈՒՏ ԽՈՒԹ

*(էջ 151)*

*Պատմել է Մեսրոպ Դալլաքյանը ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում, 1973 թ. աառանը։ Գրի է առել Բ. Ղազրյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 20 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի արխիվում։*

## 24. ՎԸՍԿԱԽԱՉ

*(էջ 151)*

*Պատմել է Արամ Գրիգորյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1970 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ա. Գրիգորյանը ծնվել է 1894 թ. Աշանում։ Աշխատում է կոլտնտեսությունում։ Տառաճանաչ է։ Նրանից գրի են առնվել բավականին նյութեր, որոնք գտնվում են ՀԱԻԲԱ (Ա. և Բ. Ղազիյանների ֆոնդում)։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 25. ՄԸՀԱՍԵՌ

*(էջ 152)*

*Պատմել է Արամ Գրիգորյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1970 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 24 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 26. ՂԼԵՆ ՔԱՐ. ԹԱՂԱԼ ԱԽՊՈՒՐ

*(էջ 152)*

*Պատմել է Մեսրոպ Դալլաքյանը ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում, 1977 թ. հուլիսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։*

*Նույն ավանդությունը պատմեց նաև Շ. Խաչատրյանը։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*

## 27. ՀՋԵՐԱԽՊՈՒՐ. ՕՎՉԻ ԱԽՊԵՐ

*(էջ 152)*

*Պատմել է Մեսրոպ Դալլաքյանը 1972 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 20 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 0729)։*

## 28. ՂԱՄՇԱՎ ԹԽԱԾ ԱԽՊՈՒՐ

*(էջ 152)*

*Պատմել է Սարգիս Ավետիսյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Նոր շեն գյուղում, 1973 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ս. Ավետիսյանը ծնվել է 1901 թ. Նոր շենում, ապրել և*

աշխատել է նույն գյուղում, զբաղվել է հողագործությամբ, կիսագրագետ է։

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 5503)։

## 29. ՋՈՐԱՆՔԱՐ. ԽԱՆԻ ԱՂԲՅՈՒՐ

(էջ 152)

Պատմել է Միրզա Աղամալյանը Ադր. ՍՍՀ Շահումյանի շրջանի Գյուլստան գյուղում, 1975 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։

Մ. Աղամալյանը ծնվել է 1896 թ., կյանքն անց է կացրել հայրենի գյուղում։ Կիսագրագետ է։

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Բ. Ղազիյանի ֆոնդ. 1975 թ)։

## 30. ԹԱՐԽԱՆ ԱԽՊՈՒՐ. ՆԱՄԱՐԴԻ ՃՅՈՒՐ

(է 152)

Պատմել է Նորիկ Պողոսյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Կաղարծի գյուղում, 1970 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղաֆիյանը։

Ասացողի մասին տե՛ս № 17 ծանոթագրությունը։

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF VI 8230—8238)։

## 31. ԽԱՂՈՂԻ ՎԱԶԻ ՄԱՍԻՆ

(էջ 153)

Պատմել է Խաչատուր Ղափլանյանը ԼՂԻՄ Մարտակերտ ավանում, 1975 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։

Խ. Ղափլանյանը ծնվել է 1912 թ., բնիկ մարտակերտցի է։ Մասնագիտությամբ ուսուցիչ է։

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Բ. Ղազիյանի ֆոնդ, 1975 թ.)։

## 32.ԽԻԿԱՐ ՆԱՆ ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆԸ

(էջ 153)

Պատմել է Մեսրոպ Դալլաքյանը ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում, 1973 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։

Ասացողի մասին տե՛ս № 20 ծանոթագրությունը։

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI, 5443)։

## 33. ԿՐԱԿԸ, ՃՅՈՒՐԸ, ԽԻՂՃԸ

(էջ 153)

Պատմել է Արտեմ Հարությունյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Հացի գյուղում, 1973 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։

Ա. Հարությունյանը ծնվել է 1913 թ. Հացի գյուղում։ Գրագետ է։

Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։

## • 34. ՍԱՖԱՐԱԼԻԲԵԳՅԱ ՆԱՂԼԸ

(էջ 154)

Պատմել է Նիկոլայ Հայրապետյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Սպիտակաշեն գյուղում 1966 թ.։ Գրի է առել նույն գյուղի ուսուցիչ Համո Եսայանը։ Ն. Հայրապետյանը ծնվել է 1886 թ., ապրում ու աշխատում է Սպիտակաշեն գյուղում։

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V, 4414—4416)։

## 35., 36., 37., 38. ԱՇՈՒՂ ՍԱՐԳՍԻ ՄԱՍԻՆ

(էջ 154—155)

Չորս ավանդությունններն էլ պատմել է Բենիկ Սողոմոնյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ղզղալա գյուղում, 1966 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։

Բ. Սողոմոնյանը ծնվել է Ղզղալայում 1926 թ., ունի բարձրագույն կրթություն։ Զրույցները լսել և սովորել է հայրենի գյուղում։

Աշուղ Սարգիսի անունը մեր օրերում էլ սիրված է. Նրա խաղերը տարածված են ոչ միայն հայրենի, այլև հարևան շրջաններում ու գյուղերում։ Ապրել և ստեղծագործել է XIX դարում։

Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։

## 39., 40. ԱՇՈՒՂ ԱՌՈՒՍՏԱՄԻ ՄԱՍԻՆ

(էջ 155)

I և II ավանդությունները պատմել է աշուղի քրոջ թոռը՝ Սաթենիկ Իշխանյանը Երևան քաղաքում, 1972 թ. ամռանը։ Գրի է առել Բ. Ղազիյանը։

Ս. Իշխանյանը ծնվել է 1902 թ., գրագետ չէ, քաջատեղյակ է աշուղ Առուստամի ստեղծագործություններին։

Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։

## 41. ԱՇՈՒՂ ԱՌՈՒՍՏԱՄԻ ՄԱՍԻՆ

(էջ 155)

Պատմել է Աստվածատուր Մարգարյանը ԼՂԻՄ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գյուղում, 1972 թ. օգոստոսին։ Գրի է առել Բ. Ղազիյանը։

Ա. Մարգարյանը ծնվել է 1883 թ., կյանքն անց է կացրել գյուղում, զբաղվել է հողագործությամբ։ Երբեմն ժամանակ եղել է Աշուղ Առուստամի տանը, որին հիշում է խորին ակնածանքով։ Բացի սույն զրույցը, պատմել է նաև հեքիաթներ։

Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF X, 7147—7149)։

# ԵՐԳԵՐ, ԽԱՂԵՐԳԵՐ

## 1. ԳՈԴԻ

*(էջ 156)*

*Ասել է Մտնուշակ (Մնիշակ) Սարգսյանը ԼՂԻՄ Շուշվա շրջանի Ղարադղլալ գյուղում, 1976 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*



*Նկ. 8. Բանասաց Մանուշակ բիբի*

*Մ. Սարգսյանը ծնվել է 1880 թ., աշխույժ, աշխատասեր անգրագետ, կին է։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲՍ (Ա. Ղազիյանի ֆոնդ, 1976 թ.)։*

## 2. ՃՈԼԻ

*(էջ 156)*

*Ասել է Աբաեմ Վարդանյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում. 1973 թ. հուլիսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ա. Վարդանյանը ծնվել է 1907 թ., կիսագրագետ է։ «Ճոլիի» և նրա հետ կապված արարողությանը ականատես է եղել մանկության տարիներին, որի մասին պատմում է հեակյալը. «Երկու փաղա մին հաշտ ինք սարքում, փլավավ կապում, մին շորա-պենա կյեց տամ, կլխեն մին փափաղ տինում, երգելավ շենը շռռ կյամ»։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղազիյանի ֆոնդ, 1975 թ.)։*

## 3. ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳ

*(էջ 156)*

*ա) Երգել է Սարինգյուլ Բալայանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Սպիտակաշեն գյուղում, 1966 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ս. Բալայանը ծնվել է 1851 թ. անգրագետ է. թեև աչքերը լավ չեն տեսնում, բայց հիշողությունը տեղն է և գիտի երգեր, խաղեր։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FFV։ 4300)։*



*Նկ. 9. Բանասաց Արտեմ Մելքումյան*

## 4. ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳ

*(էջ 156)*

*բ) Երգել է Քնարիկ Մկրտչյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1966 թ. ամռանը։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ք. Մկրտչյանը ծնվել է 1916 թ., բնիկ աշանցի է, ունի տարրական կրթություն։ Այս երգը նա լսել է գաղթական Սոնայից, որը ապրել է Ղազիյանների տանը և խնամել նրանց երեխաներին։ Սոնան հայ-թուրքական ընդհարումների ժամանակ փախել է Շուշվա կողմի գյուղերից և ընտանիքով ապաստանել Աշանում։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V։ 4298)։*

## 5. ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԳԵՐ

### ա) Հե՜, ճե՜, ճե՜ Սարգիս
*(էջ 156)*

*Ասել է Բարխուդար Ղազիյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1966 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Բ. Ղազիյանը խաղերգի կենցաղավարման մասին հետևյալն է հաղորդում։ «Սովորաբար տղա երեխաները սիրում են մանել պապի, ինչպես և հոր անկողինը՝ լսելու որևէ դեպքի պատմություն, հեքիաթ, խաղերգ։ Այդպիսի մի խաղերգ էլ բերված նմուշն է. որը հաճախ գործ է ածվում նաև*



*Նկ. 10. Բանահավաք-բանասաց Բարխուդար Ղաղիյան*

*փոքրահասակների շրջանում։ Փոքրերից մեկը կանչում է պապի (հոր) անունից. մյուսը՝ թոռան (որդու) անունից։ Վերջինս պատասխանում է՝ Հե՜։ Պապը հարցնում է՝ գաեան եկա՞լ ա։— Չէ,— պատասխանում է։ Այնուհետև տրվում է մերձակա բոլոր գյուղերի անունները հանգավոր բնութագրումը։ Խաղերգը ասվում է երգեցիկ ձայնով։ Եթե գա պապի (հոր) անկողնում է, ապա նա թվարկելով գյուղերի անունները, շոյում է թոռան (որդու) գլուխը, որի ընթացքում վերջինս քնում է։ Կարելի է համարել օրորոցային, որը տղամարդ է կատարում»։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V։ 4294)։*

### բ) ԼԱ՛Խ ԱՆԵ...

*(էջ 156)*

*Ասել է Բարխուդար Ղաղիյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1966 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղաղիյանը։*

*Բ. Ղազիյանը հետևյալն է հաղորդում. «Սովորաբար մեկը, որ մեծ է լինում, մոտենում է մի փոքրիկի, բռնում նրա գաստակը, տակով շարժում այն, արտասանելով. լա՛խ անե, լա՛խ անե... Եթե փոքրը չի ենթագրում հետևանքը և թույլ է պահում թաթը, ապա արտասանողը վերջին վանկերն արտասանելիս թաթով խփում է երեսին։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V։ 4294)։*

## 6. ՔԱ՛Թ. ՔԱ՛Թ

(էջ 156)

*Ասել է Բարխուդար Ղաղիյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1966 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Բ. Ղաղիյանը ստեղծագործության կենցաղավարման մասին հետևյալն է հաղորդում։ «Երբ երեխաները շատ են խրնդրում մեծերին, որ մի հեքիաթ պատմեն և մեծերը տրամադրություն չեն ունենում պատմելու, ասում են. «Քաթ, քաթ մին չվալ ցակատ...»։ Այնուհետև երբ հեքիաթ պատմողը ուզում է վերջակետ դնել ու երեխաներին քնելու ուղարկել, ասում է վերջարանը։ Վերջում ավելացնում է. «Քանի որ քաթ ըսոզեն պեն չմնաց, ես էլ խռոված քյնում ըմ, քոն ինիմ»։ Հիմա էլ երբ մեկին գիմում ես հեքիաթ պատմելու խնդրանքով, ասում է՝ քա՛թ, քա՛թ և այլն, իբրև կատակ, հետո՝ ըստ իր ցանկության»։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V։ 4108)։*

## 7. ԵՍ ՔԵԶ ՏԵՍԱ

*(էջ 157)*

*Ասել է Նիկոլայ Մանուչարի Շուշունցը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Կարմիր Շուկա ավանում, 1973 թ. հուլիսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ն. Շուշունցը ծնվել է 1935 թ., գրագետ է, աշխատում է որպես թիթեղագործ։ Երգը տարածված է Մարտունու շրջանում։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF XI։ 5523)։*

## 8. ՎԵՐ ԷՇԸ ՋՈՒԽԱՍ Ա

*(էջ 157)*

*Ասել է Սարգիս Պողոսյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում 1977 թ. ամռանը։ Գրի է առել Ա Ղաղիյանը։*

*Ասացողի մասին տե՛ս № 37 ծանոթագրությունը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (Ա. Ղաղիյանի ֆոնդ, 1977 թ.)։*

## 9. ԹԱՆ, ԹԱՆ

*(էջ 157)*

*Ասել է Բարխուդար Ղաղիյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում, 1970 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղաղիյանը։*

*Այս լափածոն ասվում է տղա երեխաներին խաղացնելիս։ Երեխային շալակում են և համաչափ շարժումներով բարձրացնում, իջեցնում։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF VI։ 8306)։*

# ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐ

## 1. ԱՇԱՆԵՑՈՑ ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐ

*(էջ 157—158)*

*Ասել է 60-ամյա Աշոտ Շինդյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում 1966 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Ա. Շինդյանը դիտաշխատող է, բնակվում է Բաքվում, բայց պարբերաբար լինում է գյուղում։ Նրան գյուղում Շոտի են ասում։*

*բ) Ասել է նույն Ա. Շինդյանը։*

*գ) Ասել է նույն Ա. Շինդյանը։ Մականունների կրողները պատկանում են միևնույն՝ Շինդյան տոհմին։*

*դ) և ե) Ասել է ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում ուսուցիչ Լևոն Հարությունյանը. գ) և ե) թվարկված մականունների կրողները եղբայրներ են։*

*Ըստ Ա. Շինդյանի Աշանի հին մարդկանց «փութ» անունները կապել է Շամիր-բեկը (Շամիր Իշխանյանը)։*

*Մականուններն արտասանվում են շուտասելուկի նման, արագ։*

*Մականունների համար հիմք են հանդիսանում զբաղմունքի, բնավորության բնորոշ գծերը։*

*Բըխկլոմ-այդեպան Հակոբ, բադկալ բառից։*

*Օնչուա-ժանդոտած, Լալան գյուղի դարբինն է։*

*Ջեյրան-Ալին բնավորությամբ աշխատասեր, քաջ մարդ է եղել։*

*Օղրմ-Սարգիսը փայտահատ է եղել։*

*Հոթար-չատախոս է եղել Հանեսը։*

*Թութուն-Ծատուրը թունդ ծխող է եղել։*

*Ղուզլյաղ-Խալին կուզ է ունեցել։*

*Գըղըլ Հանես-կարճահասակ է եղել։*

*Գուպու-Կյափին, Գարրիելը չատ բարի, ոչ մեկի խընդրանքը չմերժող մարդ է եղել։ Բնավորության այդ գծի համար նրան գյուղացիք համեմատել են ընկույզի միջուկի՝ պուպուի հետ։*

*Հենց-Ջանիելը ապրել է քաղաքում և նրա բառապաշարում հայտնվել է «հենց» բառը, անսովոր Ղարաբաղի բարբառին։*

*Քաշկուտ-Տերտերը ունեցել է մի քիչ տարօրինակ բնավորություն, դրա համար նրան «Քաշկուտ» (քաչք) են տսել։*

*Դահդահ-Ջավադը եղել է անտառապահ, ծիով է միշտ շրջել («դտ՛հ-դա՛հ» անելով)։*

*Կարան-Շուքյուրը սև մարդ է եղել։*

*Դուդու-Շինդին խիստ բարձրահասակ է եղել։*

*Ջախմուր-Արշակը ունեցել է մեծ, նախշուն աչքեր։*

*Աղու-Թավադը ունեցել է դառը, այսինքն տհաճ բնավորություն։*

*Բնագրերը պահվում են ՀԱԻԲԱ (FF V։ 4132—4134, 4306—4310)։*

## 2. ԳՑՈՒՂԵՐԻ ՄԱԿԱՆՈՒՆՆԵՐԸ

*(էջ 158)*

*ա) և գ) ստեղծագործություններն ասել է Արշակ Դանիելյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Աշան գյուղում 1966 թ. օգոստոսին։ Գրի է առել Ա. Ղազիյանը։*

*Բնագիրը պահվում է ՀԱԻԲԱ (FF V։ 4312—4314)։*

*բ) Ասել է Վարդան Վանյանը ԼՂԻՄ Մարտունու շրջանի Ավդուռ գյուղում, 1976 թ. օգոստոսին։ Գրի է առել Ի. Ղազիյանը։*

*Վ. Վանյանը ծնվել է 1919 թ., գրագետ է, ապրում և աշխատում է Ավդուռում։*

*Բնագիրը պահվում է բանահավաքի անձնական արխիվում։*



*Նկ. 11. Բանասաց Ալեքսան Սարգսյան*

## ԱՌԱԾ-ԱՍԱՑՎԱԾՔ, ԱՆԵԾՔ, ՕՐՀՆԱՆՔ, ԵՐԴՈՒՄ, ՍՊԱՌՆԱԼԻՔ

*(էջ158—166)*

*Գրի է առնվել 1966—77 թթ. ընթացքում Ա. Ղազիյանի և Ի. Ղազիյանի կողմից ԼՂԻՄ Մարտունու, Ստեփանակերտի, Հադրութի, Մարտակերտի շրջանների գյուղերում տարբեր տարիքի և սեռի մարդկանցից։*

*Բնագրերը պահվում են ՀԱԻԲԱ, (FF V։ 4316—4318, FF XI։ 5507—5513, FF XI։ 0723), ինչպես նաև Ի. Ղազիյանի անձնական արխիվում։*